

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 4

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Բ. Վարդանյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև Վ. Սաֆարյանը, Ա. Ներսիսյանը, աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար Հ. Բաղդասարյանը:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Աշտարակ համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Շանթ Ժորժի Վահանյանին Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Վարդան Սաուխի Սաֆարյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Արամ Գուրգենի Ներսիսյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

24 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի պահանջներով, ստեղծել <<Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկ, միաժամանակ հաստատել կանոնադրությունը:

24 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի համայնքային կառավարչական հիմնարկների գործունեությունը դադարեցնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով, նշված որոշման 1-ին կետում նշված հիմնարկների

գործունեությունը համարել դադարեցված, միաժամանակ, նշեց, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի փետրվարի 22-ից:

Հարցի շուրջ տրված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

23 - ԿՈՐԱ, 1 - ՁԵՌՆՊԱԿ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Աշտարակ համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով թիվ 17 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի «Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների արդյունքներով Աշտարակ համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 31-Ա որոշումը և 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 1 արձանագրությունը, ստեղծել Աշտարակ համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր», «Հայ Յեղափոխական դաշնակցություն», «Հայրենիք» խմբակցությունները: Միաժամանակ, առաջարկվեց Աշտարակ համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնել խմբակցության կանոնադրությունը, անվանումը և կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները և ազգանունները:

24 - ԿՈՐԱ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - *Շանթ Ժորժի Վահանյանին Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայնություն տալ Շանթ Ժորժի Վահանյանին Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

23 - ԿՈՐԱ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Շ. Վահանյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Վարդան Սաուխի Սաֆարյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին

Հարցը ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայնություն տալ Վարդան Սաուխի Սաֆարյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

24 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Արամ Գուրգենի Ներսիսյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, համաձայնություն տալ Արամ Գուրգենի Ներսիսյանին Աշտարակ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

24 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի առաջին նիստի օրը և ժամը սահմանել՝ 2022 թվականի փետրվարի 11-ը ժամը՝ 15:00-ն և նիստը կազմակերպել Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում՝ ք. Աշտարակ Ն. Աշտարակեցու հր.7:

24 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2021 թվականի դեկտեմբերի 29-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____

ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ _____

ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____

ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____

ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____

ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____

ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____

ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ _____

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ _____

ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ _____

ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ _____

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____

ԱՋԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ _____

ՍԱՐԻՔԵԿ ՕՎՈՅԱՆ _____

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____

ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ